

**ԹՈՒՉՔԱՅԻՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՎԿԱՅԱԳՐՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՓՈՐՁԱԳԵՏԻ  
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

**2022-2023 թվականի հոկտեմբեր – հունվար  
ժամանակահատվածում կատարած աշխատանքների վերաբերյալ**

1. Մասնակցություն Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի կողմից «T3 AVIATION ACADEMY» ավիաուսումնական կենտրոնը (Վկայական համար՝ UAE LIC-ATO-2008/04) (այսուհետ՝ Կենտրոն) և Կենտրոնի հետևյալ վարժասարքերի՝ A320-200 (FSTD No. AE-AA-002) և A320-200 (FSTD No. AE-AA-003) ճանաչման գործընթացին:
2. Իրականացնում եմ բանակցություններ «Bristol Groundschool Aviation Academy» ուսումնական կենտրոնի հետ Քաղաքացիական ավիացիայի թռիչքային անձնակազմներին առցանց ուսումնական և քննական ծառայությունների մատուցման վերաբերյալ:
3. Լրամշակել և ներկայացրել եմ հաստատման ՔԱԳՎ պետի 2012 թվականի նոյեմբերի 19-ի թիվ 212-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական ավիացիայի մասնագետներին վկայականների տրման կարգ»-ի թռիչքային, սրահի անձնակազմներին վերաբերող հատվածը:
4. Լրամշակել և ներկայացրել եմ հաստատման ՔԱԳՎ պետի 2015 թվականի մարտի 3-ի թիվ 70-Ն հրամանով հաստատված «Թռիչքային անձնակազմի, օդանավի տեխնիկական սպասարկման մասնագետների և օդային երթևեկության կառավարման կարգավարների մասնագիտական գիտելիքների և ունակությունների ստուգման նպատակով անցկացվող տեսական թեստավորման ընթացակարգ»-ի թռիչքային անձնակազմին վերաբերող հատվածը:
5. Լրամշակել և ներկայացրել եմ հաստատման Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի 2021 թվականի հուլիսի 21-ի թիվ 2 Ն «Օտարերկրյա պետությունների կողմից ավիացիոն մասնագետներին տրված վկայականների հիման վրա դրանց ճանաչման վավերագրի տրամադրման պայմանները և կարգ»-ի փոփոխություն:

Կոմիտեի ԹԱ վկայագրման հարցերով փորձագետ  
Աիդա Գաբրիելյան  
09.01.2023

Աիդա Գաբրիելյանի կողմից կատարած աշխատանքները գնահատում եմ 

ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ



ՄԻՀՐԱՆ ԽԱԶԱՏՐՅԱՆ